
ՄԻՈՆԻՏՏԱԿԱՆ ՀԱՐԺՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՀԵՏ

ԱՐԹՈՒՐ ԱԶԱՐՅԱՆ

Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած տնտեսական անկումը հանգեցրեց նաև քաղաքական ճգնաժամի: Բալկաններում՝ Բոսնիայում, Հերցեգովինայում, Բուլղարիայում և այլուր բռնկվեցին ազգային-ազատագրական շարժումներ, որոնք միջազգային արձագանքներ ստացան, քանի որ շոշափում էին մեծ տերությունների շահերը:

Մինչդեռ օսմանյան պետությունը, ինչպես Ռուսաստանի դեմ մղած իր նախորդ պատերազմների ժամանակ, առիթն օգտագործում էր կայսրության քրիստոնյա տարրի դեմ անվստահություն ու կասկածանքներ սերմանելու, նրանց դավաճանության մեջ մեղադրելու համար: Մասնավորապես արևմտահայությունը դիտվում էր որպես Ռուսաստանի հետ դաշնակից տարր, և նրա հետ վարվում էին ինչպես թշնամիների: Թուրքական բանակները, ռազմական գործողություններ վարելուն զուգընթաց, ավերիչ ասպատակություններ էին սփռում Արևմտյան Հայաստանում, միաժամանակ կայսրության մահմեդական բնակչության շրջանում հայերի նկատմամբ հրահրելով կրոնական ու ցեղային ատելություն:

19-րդ դարը օսմանյան թուրքերի համաշխարհային գաղութային կայսրության թուլացման ժամանակաշրջան էր: Նման երևույթի պատճառը, ըստ Հերցլի, այն է, որ Թուրքիան մի երկիր է, որը հզորացել է պատերազմի միջոցով, պահպանել է իր գոյությունը պատերազմների միջոցով և կկործանվի ժամանակակից աշխարհում: Ըստ Հերցլի, երբ եկավ այն ժամանակը, որն ընդունված է անվանել պատմության ջրբաժան՝ նոր հայտնագործությունների ժամանակաշրջանը, Թուրքիան չկարողացավ փոխվել և ինտեգրվել այդ հայտնագործություններին ու նոր ժամանակների մարտահրավերներին: Այդ իսկ պատճառով էլ սկսեց թուլանալ: Դեռ իր առաջին այցի ժամանակ Հերցլը նկատել էր այն հետամնացությունը, որ առկա էր Թուրքիայում: Այդ երկիրը ուղղակի ի վիճակի չէր իր վրա կրելու ժամանակակից աշխարհի դժվարությունները:

Բացի այդ՝ համաշխարհային հանրության աջակցությամբ ազատ և անկախ զարգացման ճանապարհին էին կանգնել բալկանյան ժողովուրդները: Թուրքական լծից ազատման իրենց ժամին էին սպասում նաև արաբական արևելքի ժողովուրդները, ինչպես նաև հայերը, քրդերը, ասորիները և այլն: Օսմանյան կայսրության ղեկավար շրջանակները համակված էին սարսափով: Անհրաժեշտ էր շտապ միջոցներ ձեռնարկել «հիվանդին» փրկելու համար: Այդ նպատակի իրականացմանն էր ուղղված «Միություն և առաջադիմություն» կուսակցության ստեղծումը:

Ընդդիմական կուսակցության անունը խոսում էր բազմազգ պետության տարբեր մասերը միավորելու ձգտման և առաջընթացի ճանապարհով շարժվելու մասին: Երիտթուրքերը, այսպես էր կուսակցության անդամների եվրոպական անվանումը, նախատեսում էին Օսմանյան կայսրությունը վերածել բուրժուական սահմանադրական միապետության՝ նրա բաժանումը կանխելու նպատակով:

«Միություն և առաջադիմություն» կուսակցությունը (թուրքերեն՝ Իթթիհադ վեթերաքի) հիմնվել է 1894 թվականին Կոստանդնուպոլսի ռազմական ուսումնարանի սաների կողմից¹: Սակայն ակտիվ գործունեություն սկսեց ծավալել 1905 թվականից հետո, երբ կուսակցության ղեկավար կոմիտեն տեղափոխվեց Սալոնիկ՝ Մակեդոնիա:

Հարկ է նշել, որ 19-րդ դարի երկրորդ կեսից եվրոպական այլ հոսանքների հետ միասին, Թուրքիա է ներխուժում ֆրանկմասոնական ուսմունքը «համաշխարհային հեղափոխության» և «համաշխարհային հանրապետության» վերաբերյալ: Այն բանից հետո, երբ երիտթուրքական կուսակցության ղեկավար կոմիտեն տեղափոխվում է Սալոնիկ, սերտ հարաբերություններ են հաստատվում իթթիհադականների և ֆրանկմասոնական օթյակների միջև: Սալոնիկի շատ ֆրանկմասոններ անդամագրվում են «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը: Կուսակցության ներսում մեծ դիրք է զբաղեցնում քաղաքի հրեականության պատգամավոր էմմանուել Կարասուն, ով «Մակեդոնիա Ռիզորտա» օթյակի գրոսմայստեր էր²:

Կուսակցության ղեկավար անձնակազմի մեջ էին մտնում Էնվերը, Թալեաթը, Ջեմալը, Քեմալը և վերոնշյալ սիոնիստ էմմանուել Կարասուն: Այս անձիք պետք է կարևորագույն դեր խաղային Թուրքիայի հետագա ճակատագրի հարցում:

Փաստերը ցույց են տալիս, որ էական է եղել սիոնիստների դերը երիտթուրքական կազմակերպությունների ամրապնդման, 1908-ի հակասուլթանական հեղաշրջման նախապատրաստման մեջ: Հիասթափվելով սուլթանի մերժումներից, հույսը կապելով իթթիհադականների հետ, սիոնիստները երուսաղեմի համար մղած իրենց պայքարը սկսում էին տանել նոր ուղիով:

Օգտագործելով օսմանյան պետության առևտրի և գործարարության ասպարեզում հայկական և հրեական բուրժուազիաների մրցակցությունը, երիտթուրքերը ճարակորեն օգտագործեցին սիոնիստների հակահայկական ծառայությունները: Նախ, գերմանա-թուրքական կողմնորոշում ունեցող սիոնիստները հույս ունեին ինքնավար Պաղեստին ստեղծել տակավին Բ. Դռան երիտթուրքական իշխանության հովանու տակ: Այնուհետև, հայոց դուրսմղումը Լևանտի առևտրաշատ ղլորտներից նույնպես օգտակար էր լինելու հրեական կապիտալի համար³:

Երիտթուրքերի և սիոնիստների միջև հաստատվել էր լիակատար փոխընթերցում: Սալոնիկում մեծ թվով հրեաներ էին ապրում: Հրեաների

¹ Տե՛ս **Մեվլան Ջադե Ռիֆաթ**, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհադի հայաջինջ ծրագրերը, Բեյրութ, 1968, էջ 83:

² Տե՛ս նույն տեղը, էջ 84:

³ Տե՛ս **Ջոն Կիրակոսյան**, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ.1, Եր., 1982, էջ 232:

ճնշող մասը իտալական քաղաքացիություն ուներ, օգտվում էր կապիտուլյացիոն պայմանագրերից և ենթակա չէր սուլթանի օրենքներին: Բուրդը իտալական մասոնական ժողովարանի անդամ էին, և տները արգելված էր խուզարկել: Նրանց կարող էին դատել իրենց հյուպատոսություններին կից դատարանները: Այս հրեաներն էլ կազմեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության հիմնական կորիզը: Ջերօ հետապնդումներից, նրանք հավաքվում էին, կազմում պլաններ, պատասպարում սուլթանի կողմից հետապնդվող քաղաքական փախստականներին⁴: Պատահական չէր, որ Սալոնիկում, այս միջավայրում երիտթուրքերի կենտրոնը մնաց, գործեց, իր համագումարները հրավիրեց մինչև 1911 թվականը: Այստեղ հրեական բազմաթիվ միություններ և կազմակերպություններ էին գործում, որոնց շարքում աչքի էր ընկնում «Ալյանս Իզրաելիթ Յունիվերսալը»: Հրեա գործիչներ Փ. Ռիսալը (ժողգեֆ Նեհամա), Նահումը, Պենարոյան և ուրիշներ և՛ սոցիալիստներ էին, և՛ սիոնիստներ, կապված էին ֆրիմասոնության հետ⁵:

Հավատափոխները կամ դեռնմենները ժամանակին Իսպանիայից եկած հրեաներ էին, որ դիրքի և հարստության տեր էին դարձել: Նրանք հիմնականում զբաղվում էին միջնորդ առևտրով Սալոնիկում, Էդիրնեում և այլ քաղաքներում: Սրանցից ոմանք «իզմիրլի» էին կոչվում՝ սափրած կզակներով, մյուսները՝ «սաբաթայի որդիներ»՝ սափրած գլուխներով: Երրորդները պատկանում էին դեռնմենների «օսման պապա» ուղղությանը: Սրանք իրենց սովորություններով, ուրբաթ օրերը մզկիթ հաճախելով ավելի մահմեդականացածներն էին: Սրանց թվին էր պատկանում Ջավիդ բեյը⁶:

Լոնդոնում հրատարակվող «Միդլ իսթերն սթադիս» պարբերականը 1971-ին (հատոր 7, № 1, էջ 89-104) հրապարակեց երիտթուրքական շարժումը բնութագրող, իթթիհադականների հակահայկական քաղաքականության ակունքները բացահայտող մի շատ կարևոր փաստաթուղթ: Այդ փաստաթուղթը երիտթուրքական հեղափոխությունից հետո Կ. Պոլսում անգլիական դեսպան նշանակված Ջ. Լոուրդի հանգամանալի զեկուցագիրն էր, որ նա 1910-ի մայիսի 29-ին հղել էր Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Հարոլդինգին: Վավերագիրը Ֆորին օֆիսի արխիվում հայտնաբերել և հանրության ուշադրությանն է հանձնել պատմաբան Էլիե Զեդուրիեն՝ «Երիտթուրքերը, ֆրիմասոնները և հրեաները» վերտառությամբ: Երիտթուրքերի հայասպան քաղաքականության հանգամանքներն ուսումնասիրելու և ըմբռնելու տեսակետից այս փաստաթուղթը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, ինչում կարող է համոզվել յուրաքանչյուր ոք, ծանոթանալով նրա բովանդակությանը:

Վավերագրի իրական հեղինակն է Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպանատան հնագույն ու ազդեցիկ թարգմանիչ (դրագոման) Ջ.Յ. Ֆիցմորիսին, որը խցկվել էր երիտթուրքական ֆրիմասոնության շարքերը, նրա գաղտնիքները բացահայտելու, դրանք անգլիական գաղութատիրության շահերին ծառայեցնելու նպատակով: Ֆիցմորիսը ոմանց կողմից ներկա-

⁴ Տե՛ս **Armstrong, H. C.** «Gray Wolf: The Life of Kemal Ataturk», New York, 1961, էջ 20:

⁵ Տե՛ս **Ջոն Կիրակոսյան**, նշվ. աշխ., հ. 1, էջ 234:

⁶ Տե՛ս **Յ. Ղազարյան**, Ցեղասպան թուրքը, Բեյրութ, 1968, էջ 13:

յացվում է որպես այդ պահին 4. Պոլսում անգլիական գլխավոր և ազդեցիկ դեմքը, որին, ըստ էության, ենթարկված էր նույնիսկ դեսպան Լոուրըրը⁷:

Հատկանշական է, որ անգլիացի դիվանագետները, մասնավորապես դեսպան Լոուրըրը, երբեմն երիտթուրքական կոմիտեն անվանում էր «Միություն և առաջադիմություն» հրեական կոմիտե, խոսում էր ֆրիմասոնների և հրեա երիտթուրքերի դաշինքի մասին, այն մասին, որ հրեաները երիտթուրքերի գլխավոր ոգեշնչողներն էին: Էլիե Քեդուրիեն գրում է, որ Օսմանյան կայսրությունը հրեաների ձեռքին դարձել էր մի գործիք հրեական պետության ստեղծումն իրականացնելու ճանապարհին: Նախարար Հարդինգն իր հուշերում գրել է, որ Օսմանյան կայսրությունը պառլամենտական կառավարման տարիներին իրականում գտնվում էր հրեաներին ենթակա ծախու երիտթուրքական կոմիտեի կողմից գլխավորվող բանակի իշխանության ներքո:

1909-ին Համբուրգում կայացած սիոնիստների 9-րդ համագումարը հռչակեց, որ հրեական աշխարհի բաժանումը տերիտորիալիստների և սիոնիստների՝ «թուրքական հեղափոխության հրաշքի» շնորհիվ վերացավ: Այդ պահին էր, որ սալոնիկցի կրիպտո հրեա Ջավիդ բեյը նշանակվեց ֆինանսների նախարար, իսկ ֆրիմասոն Թալեաթ բեյը՝ ներքին գործերի նախարար: Բնորոշ է, որ երիտթուրքական զինվորական դատարանների սպաների մեծամասնությունը նույնպես ֆրիմասոններ էին: Թալեաթը 1909-ի օգոստոսին դարձավ «Grand Orient de la Turquie» մասոնական օթյակի գլխավոր հովվապետը: Այս կազմակերպությունը ձգտում էր իր ազդեցությունը տարածել Եգիպտոսի, Սիրիայի և այլ երկրների վրա⁸:

Երիտթուրքերի գլխավոր տեսաբաններից դոկտոր Նազըմը նույնպես ուներ հրեական ծագում: Նա սալոնիկցի մի կրիպտո հրեայի հետ (Ֆայեթ բեյ Տոլեդո) այցելել էր հրեաների ներգաղթով զբաղվող հայտնի կազմակերպության Փարիզի մասնաճյուղ՝ դեպի Միջագետք հրեաների խմբերի ներհուսքն արագացնելու խնդրով:

Սալոնիկի ակտիվ սիոնիստ-երիտթուրքերի շարքերում էր Մուստաֆա Քեմալը: Նրան տվել էին եղբայր Վեդուդա Լոջ անունը: «Լոջը» միջազգային նիհիլիստական կազմակերպության մի մասն էր: Նրա մեջ շատ էին քաղաքացիությունը, ազգային դեմքը կորցրած մարդիկ, որոնք խոսում էին Ռուսաստանի հակահրեական ջարդերի կամ Վիեննայի հարուստ հրեաների մասին: Մուստաֆա Քեմալի կենսագիր Արմսթրոնգը գրում է, որ Քեմալը պատկերացում չուներ հրեաների միջազգային նպատակների ու հոգսերի մասին: Նա հպարտ էր, որ թուրք էր և հետաքրքրվում էր Թուրքիան սուլթանի բռնակալական լծից և օտարերկրյա ճնշումից ազատագրելու խնդիրներով: Արմսթրոնգը հավաստում է, որ հրեաները չէին վստահում նրան, և նա երբեք չդարձավ Միություն և առաջադիմություն՝ բարձր վերնախավի խմբակի անդամը: Այնուհետև նա գրում է, թե Մուստաֆա Քե-

⁷ Տե՛ս **Elie Kedourie**, *Young Turks, Freemasons and Jews*, Middle Eastern Studies, vol. VII, N1, London, 1971, էջ 90:

⁸ Տե՛ս **Christopher Jon Bjerkness**, «The Jewish Genocide of Armenian Christians», Second Edition, NY, 2007, v. 1, էջ 215:

մալը դժգոհ էր իթթիհադի պարագլուխների շատախոսություններից ու անգործնականությունից: Ըստ Արմսթրոնգի՝ նա չէր հարգում նրանց, կռվել էր էնվերի հետ: Արմսթրոնգը էնվերին համարում էր շտապող տղա, թալեաթին՝ այդ փոստային պաշտոնյային, անվանում էր «մեծ անճոռնի արջ», Ջեմալին՝ կուզիկ թխսամայր, խելքը կորցրած ասիացի, Ջավիդին՝ Սալոնիկի հավատափոխ հրեա և այլն⁹:

Սիոնիստների հետ երիտթուրքերի հակահայկական համագործակցության մասին գրում է Թեհրանի համալսարանի պատմության պրոֆ. Իսմայիլ Ռահիմը: Հայերի կոտորածի մեղավորներ ճանաչելով երիտթուրքերին և գերմանացիներին, թուրքական նացիոնալիզմն ու պանթուրքիզմը, պարսիկ պատմաբանն ընթերցողի ուշադրությունն է հրավիրում Օսմանյան կայսրության ազդեցիկ հրեա դեմքերի բացասական դերի վրա: Նա հիշատակում է մի ֆրանսիացու «Le Dernier bal» («Վերջին բալը») գրքի 1-36 և 46-86 էջերը, որտեղ փաստեր և ապացույցներ են արձանագրված միջազգային սիոնիզմի հակահայկական գործողությունների մասին: Մասնավորապես, հիշատակվում է 1914-ի հունիսի 23-ին Ստամբուլի «Նուրի օսման» ակումբում կայացած իթթիհադ կուսակցության ակտիվիստների և սիոնիստների համատեղ գաղտնի ժողովը: Որին մասնակցել է մոտ 700 մարդ, այդ թվում՝ Թալեաթը, Բադրին, Սեդը, Ֆեքրին, Խիավին և ուրիշներ: Հրեաներից աչքի ընկնող դեր են խաղացել Սամուել Էֆենդին, Աբրահամ Էֆենդին և ուրիշներ: Այստեղ էին նաև Ռուսաստանից հեռացած մուլի պանիսլամիստներ Ահմեդ Աղանը, Ջելալ Կորխմազովը, Մահմուդ Թադիկը, Ջիա բեյը և ուրիշներ: Ժողովն ընթացել է հակառուսական կատաղի լուզումների հեղեղով: Հայերին մեղադրում էին ռուսասիրության մեջ: Որոշվել է բոյկոտ հայտարարել ինչպես հայերին, նույնպես և հույներին: Գլխավոր ճառախոսը Թալեաթն էր:

Իսմայիլ Ռահիմը ցույց է տալիս, որ թուրքերի պլանն էր՝ վերացնել Հայաստանի «վտանգը» պանթուրքական աշխարհակալ ճանապարհից, Ադրբեջանի վրայով կապ հաստատել Սիջին Ասիայի հետ: 1915-ի դեկտեմբերի 31-ին Վիեննա ժամանած թուրքական պատվիրակությունը, որը գլխավորում էր Ռուսաստանից հեռացած Յուսուֆ օղլի Աբջուրան, ավստրիական կառավարությանը հանձնած հուշագրում պահանջում էր Բուխարան և Թուրքմենստանը ազատել ռուսական տիրապետությունից, Դրոզդստանին շնորհել քաղաքական անկախություն, Կազանի և Դրիմի մահմեդականներին դնել Թուրքիայի հպատակության տակ, ինքնավարություն շնորհել Վոլգայի բոլոր թաթարներին: Ավստրիական կառավարությունը խոստացել էր ուսումնասիրել ու պատասխանել¹⁰:

Այսպիսով, վերոնշյալ ուսումնասիրությունները և մասնավորապես դեսպան Լոուրըրի նամակը թույլ են տալիս մեզ եզրակացնելու, որ ձևավորվել էր հստակ համագործակցություն սիոնիստական ու մասոնական կազմակերպությունների և երիտթուրքական շարժման միջև: Հրեաներն որոշակի աջակցություն ցուցաբերեցին երիտթուրքերին իշխանության գա-

⁹ Տե՛ս **Armstrong, H. C.** Gray Wolf: The Life of Kemal Ataturk, New York, 1961, էջ 21:

¹⁰ Տե՛ս **Ռահիմ Իսմայիլ**, Հայերի ցեղասպանությունը օսմանյան սուլթանների օրոք, Թեհրան, 1972, էջ 42-43:

լու հարցում, իսկ այնուհետև սկսեցին ղեկավար պաշտոններ զբաղեցնել երիտթուրքական նորաստեղծ կառավարությունում: Այն, ինչ սիոնիստներին չէր հաջողվել ստանալ սուլթան Աբդուլ Չամիդից, այժմ նրանք փորձում էին ձեռք բերել երիտթուրքական իշխանություններից: Երիտթուրքական ղեկավար շրջաններում մեծ թվով սիոնիստների և դեոնմենների առկայությունը թույլ էր տալիս հրեաներին թուրքական քաղաքականությունը տանել իրենց ձեռնտու ուղղությամբ: Նրանք մեծ դեր էին խաղում այդ քաղաքականության ձևավորման և մշակման գործում: Իսկ սա մշանակում է, որ երիտթուրքերի հայատյաց քաղաքականության մշակման և իրականացման մեջ սիոնիստներն ու հրեա դեոնմենները ևս իրենց որոշակի բաժինն ունեին: Երիտթուրք պարագլուխների՝ մասոնական օթյակների և սիոնիստական կազմակերպությունների ղեկավար անդամներ լինելու հանգամանքը թույլ է տալիս փաստել, որ այդ տարիներին թուրքական պետությունը ուղղորդվում էր մասոնների և սիոնիստների կողմից: Փաստորեն, եթե նախկինում սիոնիստներն ուղղակի շահարկում էին Չայկական հարցը՝ որպես գործիք սեփական նպատակների ու խնդիրների լուծման համար, ապա այժմ քողարկված լինելով երիտթուրքական կառավարության շղարշի ներքո, նրանք անմիջական մասնակիցն էին դառնում երիտթուրքերի հայատյաց քաղաքականությանը:

АРТУР АЗАРЯН – *Сотрудничество сионистского движения с младотурками.* – К концу XIX века произошло дальнейшее ослабление колониальной империи османских турок. Основатель сионизма Теодор Герцль объяснял это тем, что Турция приобрела свою мощь за счёт войны, поддерживала своё существование посредством войн и обречена на гибель в современном мире, где войны обходятся слишком дорого. Герцль полагал, что с наступлением эпохи научно-технического прогресса, которую принято называть водоразделом истории, Турция не смогла реформироваться и соответствовать новым требованиям. Ещё во время своего первого визита в эту страну родоначальник сионистского движения заметил её отсталость. Османская империя была не в состоянии адекватно отвечать на вызовы современного мира.

В Салониках, куда перебрался комитет, управлявший младотурецкой партией, жило большое число евреев. Подавляющее их большинство имело итальянское гражданство и не подчинялось султанским законам. Между младотурками и сионистами установилось полное взаимопонимание. И если ранее сионисты просто использовали армянский вопрос как орудие для достижения собственных целей и решения своих проблем, то с этого времени они непосредственно подключились к армяноненавистнической политике младотурецкой партии.

ARTHUR AZARYAN – *Zionist Movement and Collaboration with Young Turks.* – The 19th century was the era of the further weakening of the global colonial empire of the Ottoman Turks. According to Herzl, the reason for this phenomenon was the fact that Turkey – a country that has acquired its power at the expense of war, maintained its existence through wars and is condemned to death in

the modern expensive war world. According to Herzl, when it was the period of new inventions, which is called a watershed of history, Turkey was not able to change and to integrate in these new inventions in accordance with the new requirements. For this reason, it began to weaken. During his first visit Herzl saw the backwardness of Turkey. This country simply can't take the challenges of the modern world.

A mutual understanding was established between the Young Turks and the Zionists. A large number of Jews lived in Salonica. The vast majority of Jews had Italian citizenship, enjoyed capitulatory agreements and didn't obey the laws of the Sultan. They were members of the Italian Masonic meeting.

In fact, if earlier Zionists used the Armenian question as a tool to achieve their own goals and solve their problems, now masquerading under the government of Young Turks, they become direct participants of the Armenian-hated policy of the Young Turks.